

JAMES HARPOLE

ԴԱՐԱՒՈՐ ԱՆԷԾՔ ՄԸ

Գ իւղակա՛ն կեանքիս մանկութեան յու՛շ
շերէն միտքս կու գայ մեր պարտիզ-
պանին մէկ ազդարարութիւնը. « Եթէ աջ
ձեռքիդ վրայ բութամատիդ ու ցուցամա-
տիդ մէջտեղի մաշկը վիրաւորես՝ պի՛րկէ (1)
(tetanus) կը մեռնիս » :

Ահա ժողովրդական զարմանալի աւան-
դութիւն մը որ սերունդէ սերունդ եկած է
մինչեւ մեր օրերը, և այսօր ալ կուրօրէն
կը հաւատան անոր: Կը յիշեմ իմ մեծ
վախս երբ անգամ մը բռնթամատիս մօտ
վիրաւորուեցայ:

Տարեքս առնելով ու գիտութեան մէջ
առաջ երթալով սկսայ տարակուսիլ մեր
պարտիզականին ըսածին վրայ, ու երբ
սկսայ համալսարանական գլխարկը կրել
ու գիտնականի հովեր առնել կը ծպտէի
այդ հին սնտուղաշտութեան վրայ:

գայ « *Clostridium tetani* » գիտական
անունով կոչուած մանրէէն, և որոշեալ
տեղի մը մաշկը կտրելը ո՛ր և է կապ չունի
անոր հետ:

Իայց ահա, օր մը դասընկերներէս մէկը
հիւանդանոց բերուեցաւ՝ հրազէնէ մը վի-
րաւորուած ու զինքը խնամելը ինծի վիճա-
կեցաւ։ Ընկերս որսի զացեր էր հօրը հետ
միասին, մացառէ մը անցած տտեն հրա-
ցանին բլթակը ճիւղիկի մը մէջ անցնելով՝

(1) Պիրկ - ւա. Tetanus. Այս բառին համարժեք
Հ. Մ. Քաջունի կը գնէ Կարկամառքիւն. Լուսինեան
Կարկամառաւ, Հորձք (հորձք բառը աւելի կատարգութեան
թիւրեւ յարմարի, որովհետեւ կիրք, յուզում կը նշա-
նակէ): Բնարեցի Պիրկ բառը որ արժատն է մեր պրկել,
պրկում բառին, ու զորձածուած անձկանաբար ու մակ-
բայաբար՝ ձիգ, լարուած, ուժով կապուած իմաստներով.

Հարուածը կը մեկնի ու զժբախտ երիտա-
սարդը կողին վրայ խոր ու գէշ կերպով
կը վիրաւորուի: Եղածը սակայն վտան-
գաւոր բան մը չէր, ու կրնայինք ուրա-
խանալ որ աւելի գէշը չէր պատահած:

Օր մը, իր հիւանդանոց մտնելէն գրեթէ
շաբաթ մը վերջը, սկսաւ ինքզինքը գէշ
զգալ: Հիւանդապահուհին ցոյց տուաւ
ինծի անոր թուղթը. ջերմը կը բարձրա-
նար:

Հարցուցի իրեն՝ թէ ինչպէս է:

- Դէ՛ Զէ. - պատասխանեց: - Բայց զարմանալի բան մը կայ. չեմ կրնար լաւ կրել:

Քննեցի վերքը. բայց գեշցած ըլլալու
ո՛ւ է նշան չունէր, բորբոքուող չէր տա-
րածուած ու ջերմը արգարացնող ոչ մէկ
նշան կ'երեւէր, այնքան որ ըսի իրեն.

- Ոհ, բան մը չկայ, հաւանաբար բնու-
թեան հակազդեցութիւն մըն է, կարեւոր-
ութիւն տալու չէ:

Տասը վայրկեանս վերջ պատմեցի եղածը
հերժապահ վերադարձին, մինչ կը սպա-
սէինք նախաստեղծակէն մէջ մեծ մարդուն,
մեր « Բժշկապետ » ին :

- Ի՛նչ բռն է աս, - ըսաւ ան խիստ
կերպով, - Ինչո՞ւ սկիզբէն չիմացուցիր:

— Ճիշտ հիմա քննեցի զինքը. — ըստ
զարմացած:

— Կրողը տանի, — շարունակեց վիրա-
բայժը, — Բժշկապետը հիմա կը հասնի.
դուք քիչ մը զբաղցուցէք զինքը, ես կ'եմ
թամ կը նայիմ թէ Բնշ կրնայ ըլլայ:

Մինչ ես իմ գործերուս ետեւէն էի թքշարել, հասնում էր ինձ իմ անհայտ ընկերներից մեկը՝ Գառ յայտնի էր թէ

ևերոպական բառը, որ յունարէնէ առնուած է ճիշտ այս
կը նշանակէ, Միւս կողմէն կարկամորէն կամ կար-
կամախոշ շատ սկաւր զաղափար մը կու տան այս ահաւոր
սխառն, ի վերջոյ չափազանց երկար բառեր են, մանա-
ւանդ երբ ստիպուիմք բարդութիւններ շինել օր. հսկա-
կարկամախոտակեան...

բան մը կար, բայց ես զեռ շատ անկողով
էի հասկնալու համար:

Հիւանդը կը գանգատէր թէ վիզը շատ
պրկուած կը զգայ ու սրունքները կը ցա-
ւէին: Բժշկապետը հանդարտեցուցիչ մը
պատուիրեց , քանի մը կատակաբանու-
թիւններ ըրաւ ու անոյշ անոյշ ժպտելով
զուրպ ելաւ :

Բայց հազիւ դուրս ելած՝ կեցաւ սրահին մէջ, ու զիմակը ձգելով երեսէն, բառ մը միայն րսաւ. « պիտի »:

Այն ատեն դեռ այդ բառը մահ կը նշա-
նակէր. մահ մը ահաւոր, ջղային պրկում-
ներով, սարսափելի տանջանքներով,
պժգալի կրողին՝ պժգալի տեսնողին հա-
մար: Բառին զուտ իմաստով սարսափահար
եղած էինք:

Չեմ յիշեր թէ ռըքան տեւեց. կը յիշեմ միայն որ վերջերս երբ մուգինը այլ եւս չէր ազդեր՝ պարօքս էր անոր քլորափերս (chloroformium) մատուկարորել հաւաոր տանջանքները մեղմելու համար, ու երբ անոր կզակները վերջնականապէս փա- կուած էին անդիմազդելի պրկումէ մը ռնգունքնեկէն կը սնուցանէինք զինքը:

Այն մեծաւ հնաւորից հիւանդանոցի մը
առանձնացած սենեակի մը մէջ՝ փայտե
անկողնի մը վրայ, որուն վրայ ապահո-
վարար շատեր մեծած էին: Չեմ գիտե-
թէ ո՞վ ըսաւ որ այդ մահճակալին վրայ
ապահովապէս կը վրտային մանրէները
կը յիշեմ միայն թէ քանի մը ամիս վերջ
ձեռներէց ուսանող մը, պարզապէս հե-
տաքրքրութեան համար, այդ սենեակի փո-
շիէն առաւ սերմերու մշակութիւն մը փոր-
ձելու համար:

Կը սպասէինք սովորական օգտածին ջիւ:

(2) Ջիւն - ւտ. Bacterium, Bacillum, Շ. Մ. Քս
 Զուրի Բակեղ, Ճոկանակ կը զործածէ, Լուսինեան Բակեղ
 Յզկիկ, Մանրիկ, Բակղերիւս, Մանրամշոյս (բաւերու առա
 տուութիւն), Նալընտրեղիկ զործածութիւնէն զաղրած ընի
 հալիւրէն այս լին բարբ, որ կը նշանակէ ձեծիւն զա
 ւազան, ձաղիւր, Խրոզական բաւերը, մէկը յունարէն

ները ⁽²⁾ (bacterium) տեսնելու, որոնք
ամեն տեղ կը գտնուին եթէ մանրէներու
մշակութեան յարմար բարակ թեթեղ
մը զրուի օդին. բայց անոնցմէ զատ սար-
մը կ'առնէր նաեւ պիրկի ջինները:

Ս.ՅԴ ՊԺԺԲԻՄՈՒԹԵՆԷՆ ՎԵՅ ԱՄԻՐԱ ՎԵՐՆ՝
 ՆՈՒՄՆ ՀԱՆԱՍՏՈՒՄ մը ամէնըս ցնցեց։ Իսկ
 ինծի համար դաս մը եղաւ, զոր երբեք
 պիտի չմոռնամ. այսինքն թէ ամենախիստ
 ու խղճամիտ հականերիութիւն մը հար-
 կաւոր է ո՛ր և է վիրաբուժական զործ ընելէ
 առաջ։

[illegible]

Իսկ փոշիին մէջ տարիներով կ'ապրի։
Հիմա ես ալ կը տեսնեմ թէ բռնա-
մատին մօտ կտրելու անապաշտութիւն
կարծածա՞նք սորական բան մը չէ։ Մէկ
որ պարտեզի մէջ բահ ու բրիչով կ'աշ-
խատի, շատ դիւրաւ կրնայ բռնամատ
ու ցուցամատին մէջտեղը քերթուածը
մը վիրաւորել գործիքներու կոթերուն յա-
րատեւ շփումին հետեւանքով, ու այսպէս
վարակում մը առնել։ Ոյս աւանդութիւնը
ու ասոր նման դեռ շատեր ալ որոնք նո-
րոյթէ անցեր են՝ իրականութեան վրա
հիմնուած են, կը բաւէ անդրադառնալ ա-
նոնց վրայ։

Կեսանքիս մէջ պիրկի շատ դէպքեր ու
նեցած եմ: Վկայականն առնելէն վեր
իրեւ օգնական բժիշկ առաջին զիտուա
ներէն մէկը հզաւ պորտային պիրկէ վա
րակուած նորածին մը, ծննդաբերուլիս

Իսկ միւսը լատիներէնէ առնուած, գաւազանիկ կը նշ-
նակեն, ուստի յարմար մեր Զին բառին: Այս համա-
բառով շատ աւելի դիւրին է ըսողորձայն բարդութի-
նի կարեւիւ է կազմել ըսն վերիններով, օր. ցպիկ-
բանութիւն, մանրկապան, հակաբալետական, ճոկանա-
բանական... ականջ բեր որ զիմանայ...

ժամանակ չհականելու ամբողջական փորձերը համար: Նույն ատենները փորձի փասթեթոր Հաստատությունը հակապերկան (serum antitetanicum) առնուով շիճուկ մը պատրաստել էր: Ու ես որոշեցի փորձել այդ ղեղը՝ հիւանդանոց բերուած մանուկին վրայ:

Թանկարժէք շիճուկ վրայ փրանսերէն գրուած էր գործածութեան կերպը: Խնամքով կարգացի գրութիւնը, գէթ այնպէս կարծեցի, երեք ժամ մէջմը զիս արթնցնել կու տայի ներարկուածներ ընելու համար: Մանուկը տասը օրուան էր, ուստի ոչ ոք կը յուսար որ փրկուի, և սակայն փրկուեցաւ մեծ անակնկալ պատճառով աւելուս:

Բժշկապետը խնդակցութիւններ յայտնեց ինծի, յանձնարարելով տեղեկութիւն մը հրատարակել այս դէպքի մասին: Յօդուած մը գրեցի ուրեմն, ու նա ստորագրեց, որովհետեւ իրբեւ հիւանդանոցի մեծը՝ իրեն կը վերագրուէր այս դէպքը: Յօդուածիս հրատարակութենէն վերջ՝ երկու-երեք շաբաթ նամակներու տեղատարափ մ'էր որ կ'ընդունէր նա այս դէպքի վերաբերեալ հարցումներով լի: Իրեն համար խնդիրը քիչ մը տաղտկալի էր, քանի որ մանուկը առողջանալէն առաջ բնաւ չէր տեսած: Ուստի ճարահատ նամակներու ղէզը ինծի բերաւ:

— Ամէնքը կ'ուզեն զիտնալ, — ըսաւ նա — թէ ինչո՞ւ մանուկին սովորականէն տասնապատիկ աւելի ներարկում ըրած ենք:

— Ինչ... տասնապատիկ աւելի...:

Ու անմիջապէս վազեցի շիճը բերելու, նորէն կարգացինք գրութիւնը մեծ խնամքով: Անոնք իրաւունք ունէին, որովհետեւ կարգացած ատենս տասնորդականի մը սխալն ըրած էի:

— Ահա, հաւանորէն, թէ ինչո՞ւ մանուկիդ տակաւին ողջ է. — խորհրդածեց բժշկապետս:

Ու խնդիրը ճիշտ այնպէս ալ էր: Շիճուկը շատ թանկարժէք էր այն ատենները, ու բժիշկները հնդկական խոզուկներու վրայ եղած փորձերէն հետեւեցնելով՝ չափազանց քիչ քանակութեամբ կը ներարկէին հիւանդներուն: Այսպէս մեր սխալը նախախնամական եղաւ, ու աւելի առատ չափերու դար մը բացուեցաւ: Իննսուն առ հարիւրէն՝ մահերու թիւը 75 առ հարիւրի իջաւ: Շուտով լաւագոյն արդիւնքներ ձեռք բերինք շիճուկը ուղղակի արիւնի մէջ ներարկելով փոխանակ մորթի տակ ընելու: ամէնէն վերջ նկատեցինք թէ լաւագոյն ոճն էր շիճուկը ներարկել զանկային խոռոչին կամ ողնայարի վտառին մէջ:

Բայց այս ոճով ալ շատ անգամ ի դերեւ կ'ելլէին մեր խնամքները:

Կը յիշեմ մարդուն մէկը որ կամուրջէ մը անցած ժամանակ ոտքին մէջ ժանգոտած գամ մը մտեր էր. եթէ ան բժիշկ մ'ըլլար՝ կը վազէր անմիջապէս առաջին հիւանդանոցը ու իրեն ներարկում մը ընել կու տար: Մինչդեռ ան չըրաւ, ու երբ շաբաթ մը վերջ զինքը տեսանք, արդէն ուշ էր: Ստուգապէս երբ ամենափոքր հաւանականութիւնն անգամ ըլլայ՝ վէրքին մէջ այդ անիծեալ սերմերէն ընդունելու՝ միակ ողջամիտ բանն է ներարկում մը ընել տալ:

Ո՛ր և է վէրք, որուն մէջ հող մտած ըլլայ կամ օտար մարմին մը, կասկածելի է: Զինները՝ որ պարտէզի հողէն կու գան, ինչպէս վերջ յիշեցինք, կ'աճին միայն երբ խորապէս վէրքին մէջ թափանցած ըլլան, ուր թթուածինը այլեւս չի հասնիր:

Պատերազմի ժամանակ պիւրկին դէմ կոտորելու լուրջ խնդիր մըն էր երբ Անգլիացիները ու Գերմանացիները կը կոռէին Ֆլանտրի պարարտ ցիւրերուն մէջ: Անոնց վէրքերը գրեթէ միշտ ապականած էին հողոտ գնդակներէ կամ ուռմերու բեկորներէ: Զանոնք վարակուած անփնաս պահելու միակ միջոցն էր՝ անմիջապէս նախազգուշական ներարկում մ'ընել բանակի զարմանալիներուն մէջ ու ետեւի գիծերը ղրկել:

Նոյնը կը պատահէր նաեւ միւս ճակատներուն վրայ ալ ուր կոտոր մշակուած հողերու վրայ տեղի կ'ունենար: Եզիպտոսի մէջ՝ պատերազմի առաջին տարիներու ընթացքին մինչեւ որ Սինայի անապատին մէջ կը կոռէին զինուորները, ոչ մէկ պիւրկի դէպք տեղի ունեցաւ: Բայց հազիւ թէ պատերազմը Պաղեստին փոխադրուեցաւ՝ մշակուած երկիրներու վրայ՝ հիւանդութիւնն ալ անմիջապէս երեւան ելաւ, ու սկսանք նախազգուշական ներարկումներ ընել:

Այս ներարկումներու պատճառով անգամ մը քիչ կը մնար փորձանքի հանդիպելի:

Աւստրալիացի սաւառնորդ մը զարնուեր էր Գազայի կողմերը. իր մէկ ընկերը, նոյնպէս աւստրալիացի, իջեր զինքը իր գործիքին վրայ առեր էր: Ինկածը՝ թեւին վրայ վիրաւորուել էր հրացանէ մը. որովհետեւ զինքը անմիջապէս սաւառնակով շեցինք զինքը անմիջապէս սաւառնակով շեցինք զինքը զրկելով ֆանթազիայի հիւանդանոցը, որ Սուէզի ջրանցքին վրայ էր: Կարեւոր անձնաւորութիւն մըն էր ան, Փոխ-Դիւանադպիր մը, ուստի ամէնքս մեծ հոգ կը տանէինք իր վրայ որ չըլլայ թէ բան մը պատահի և որպէս զի ապահով ըլլանք՝ նախազգուշական ներարկում մը ըրինք:

Ներարկումէ վերջ 99 առ հարիւր դիպումներուն մէջ բան չի հանդիպել. բայց կրնայ հարիւրերորդին պատահիլ որ բնուած շիճուկին դէմ, որմէ կը պատրաստուի ղեղը: Այս պարագային, ներարկումէն քանի մը վայրկեան վերջ՝ ենթական բուրովին կը կարմրնայ և դէմքն ու մարմինը զնդակի մը պէս կ'ուռնին ու կրնայ պատահիլ որ մինչեւ իսկ շնչարգելութիւն ունենայ:

Ճիշտ այս պատահեցաւ մեր աւստրալիացի փոխ-դիւանադպիրին: Բնականաբար անհաճոյ զլխու ցաւ մը: Բարեբախտաբար ասոր ալ դարմանը կայ, Adrenalina-ն: ասոր ալ դարմանը կայ, Adrenalina-ն: Անապարանքով մեծ քանակութեամբ ներարկեցինք՝ անձկագին սպասելով հետեւանքին: Փառք Աստուծոյ, ղեղը ազդեց և ուռեցքը եկած արագութեամբ իջաւ: Ինքն ալ, մենք ալ շուրջ քաշեցինք: Բայց անմիջապէս խնամքով նշանակեցինք իր առողջապահական թուղթին վրայ որ զգուշանան ասկէ վերջ իրեն ու է շիճուկը ներարկելէ. բացի վերջին աստիճանի անհրաժեշտութենէն, բնականաբար, պէտք հրաժեշտութենէն: Սինայի գոգ տուփերու մէջ գրուած ապակեայ սրուակիկներով: Անգամ մը այս տուփերէն մեծ թիւով ճամբեցինք ղեպի ճակատ Սինայի անապատը կտրող զինուորական շոգեկառքով:

Բնականաբար շոգեկառքը, որ կը տանէր նաեւ ղեղերը, ամբողջ գիշերը քաշեց դանդաղօրէն անապատը կտրելով, կանգ առնելով փոքր կայարաններու մէջ, անցք տալու համար զինուորներու, վիրաւորներու, ինչպէս նաեւ պաշար ու մթերք փոխադրող քառակողմ մը միայն գոցուած էին: Որոնք ծածկոցով մը միայն գոցուած էին:

Անապատի խորամանկ Պետեւիները չէին պակսիր այցելութիւն տալէն կառքերու՝ տանելու համար ամէն ինչ որ դիւրատար էր: Լաւ ուրեմն, նոյն գիշերը բոլոր շիճուկը աներեւոյթ եղաւ: Ճարտար գողը 1000 ստերլինի աւարի մը տիրացաւ: Ես, սակայն, մինչեւ այսօր ալ կը հարցնեմ ինքնիրենս, թէ ինչ կրնայ ըրած ըլլալ անոնցմով:

Բնականաբար շիճուկով եղած խնամքը այնքան աւելի ազդու է որքան շուտ ըլլուի: Երբ ախտը արդէն ճարակած է՝ շատ դժուար է արգիլել պրկումները, և արդէն ճիշտ անոնք են որ կամաց կամաց հիւանդը կ'ընկճեն: Այս պրկումներուն պատճառած մահը խնամքի բոլորովին ուրիշ կերպի մը վրայ մտածել տուաւ:

Այս է ահա գաղափարը, եթէ միջոց

մը հնարուի պրկումները արգելելու՝ հիւ-
անդը կրնայ բաւական երկար ապրիլ,
ժամանակ տալով բնութեան ու զեղերուն
յաղթելու մանրէներու թոյնին:

Դեղեր մը այն ատեն միայն կը լարուի
ու կը պրկուի երբ անոր հրամայող շիղերը
թունաւոր նիւթէ մը զրգռուին: Այսպէս
մորմիտը (Strychna) ու պիրկի շիններուն
արտադրած թոյները՝ նիւթեր են որոնք
անհնական կերպով կը զրգռեն շիղերը՝
պրկումներ պատճառելով: Պարզ է ուրեմն,
պէտք է գտնել նիւթ մը որ ընդարմացնէ
զնգերներուն ջղուտ ծայրերը ու արգիլէ
անոնց՝ հիւանդը մեռնելու չափ պրկուիլ:

Այս դեղը գտնուած է. բայց ահաւոր
կերպով մահացու է ան: Այս դեղը գտաւ
հարաւային Ամերիկայի մէջ՝ բնագէտ Կա-
րոլոս Ուոթըրթըն, արտառոց մարդ մը:
Տեղացի բնիկները ահաւոր թոյն մը կը
գործածեն իրենց նետերուն համար զոր
Քուրարոյ կը կոչեն: Այդ նետերէն պատ-
ճառուած ամէնէն փոքրիկ երթումըն ալ
մահ է. որովհետեւ թոյնը այնքան ազդու
է որ քանի մը ակնթարթի մէջ կ'անդա-
մալուծէ շնչառութեան զնգերները:

Կախարդները ամենամեծ գաղտնիքի
տակ կը պատրաստեն զայն: Չանազան
խոտերու և հունտերու մեծ քանակութիւն
մը հաւաքելով ջուրին հետ կը խառնեն և
ամբողջութիւնը մեծ սանի մը մէջ լեցու-
ցած հանդարտ կրակի վրայ կ'եփեն, մին-
չեւ որ խիստ մը դառնայ. ու այս խառ-
նուրդը պարապ զգումներու մէջ կը պա-
հեն, պատրաստ ծառայելու այն ողորմու-
թեան գործին՝ որուն համար եփուած է:

Ուոթըրթըն հետը բերած է Հարաւային
Ամերիկայէն քիչ մը նետերու այս թոյնէն.
Եւրոպացի բնագէտները տարրալուծելով՝
գտած են թէ անոր մէջ թունաւոր մասը
կազմողը՝ կալաքարակերպ (Alcaloide) ան-
ունը տրուեցաւ: Կրնանք ըսել թէ այսօր
այդ մահաբեր զեղին բոլոր արգիւնները
կը ճանչնանք:

Սա այնքան վտանգաւոր է՝ որ միայն
շատ քիչ քանակութեամբ կը պահեն բնա-
խօսական աշխատանոցներու մէջ՝ կարեւոր
փորձերու համար. ոչ մէկ զեղարանէն
կարելի է գնել, և ոչ կը պատրաստուի վա-
ճառքի հանելու համար: Սակայն կարելի
է զայն գործածել եթէ մտածենք որ ան
կրնայ չէզոքացնել պրկումները՝ ճշգրիտ
չափով ներարկուած պարագային: Կը
հասկցուի չափը ամենամեծ խնամքով պէտք
է ճշդել, այլապէս հիւանդը պիտի մեռնի
բուրարոյի պատճառած անգամալուծու-
թեան հետեւանքով փոխանակ պիրկի պըր-
կումներու: Ի հարկէ աւելի հանգիստ մահ
մը, եթէ մեր փնտռածը նա ըլլար:

Այսպէս ուրեմն յայտնի յուսահատական
պարագայի մէջ կարելի է ներարկել բու-
րարուն թեթեւ քանակութեամբ ու լաւ
չափուած:

Պիրկի համար բուրարոյի գործածու-
թիւնը, լաւ եւս անոր յոյզին, բուրարի-
տին, շատ դիւրաւ ու անմիջական մուտք
չգտաւ: Արդէն 1878-ին առաջարկուած
էր անոր գործածութիւնը Հունթըր անու-
մէջ: Բայց ոչ ոք համարձակել էր գոր-
ծածել, կամ եթէ գործածող ալ կար՝ կը
զգուշանար ձայն հանելէ, հաւանաբար՝
որովհետեւ բոլոր իրենց խնամած հիւանդ-
ները միւս աշխարհ գացել են: Ու այս-
պէս կամաց կամաց մոռցուեցաւ բուրարուն
և անոր գործածութիւնը:

Բայց 1931-ին բժշկապետ Հէրթրիճ ու
իր աշխատակիցը Տոքթ. Ռէնիարտ Ուէսթ
անդրադարձեր են որ բուրարոյով կարելի
է շուններուն պրկումները չէզոքացնել.
ուստի նորէն առաջարկեցին անոր գործա-
ծութիւնը: Երեք տարի վերջ Տոքթ. Լէսլի
մը՝ որ ձեռքը վիրաւորած էր եղէգով աշ-
խատած ժամանակ: Հակառակ ներար-
կեղծ մարդուն վիճակը արագօրէն կը ծան-
րանար:

Տոքթ. Քօլ ամէն յոյս կորսնցուցած,
որոշեց բուրարոյի դիմել:

Բժշկապետ Հէրթրիճ իրեն հայթայթեց
փոքր քանակութեամբ բուրարոյ, ու նա
ամէն զգուշութիւն ընելով ներարկեց հի-
ւանդին 32 հազարաւորամ: Երկու ժամ
յետոյ պրկումները սկսան թուլանալ:

Կրկնեց ներարկումը. մինչեւ 48 ժամ
ամէն բան լաւ գնաց. յետոյ սակայն
պրկումները նորէն երեւան եկան: Մահա-
բեր թոյնը անգամ մըն ալ ներարկուեցաւ
անոր երակներուն մէջ. մարդուն վիճակը
նորէն բարւոքուեցաւ, սակայն 48 ժամ
վերջ նորէն զօրացաւ ախոր: Փորձերէն
բաջալերուած երրորդ անգամ մըն ալ ըրաւ
ներարկումը, սակայն ոչ առանց եկիւղի,
թէ գուցէ չափազանց ըլլայ թոյնը ու մար-
դը մեռնի շնչառութեան զնգերներու ան-
դամալուծութենէ:

Բարեբախտաբար այս երկիւղալի են-
թաղրութիւնը չիրականացաւ: Մարդը
ապաքինումի վիճակ մը սկսաւ, ու ամիսէ
մը թողուց հիւանդանոցը: Բժշկութիւն մը
որ հրաշք մ'ըլլաւ կը թուէր:

Այլեւս անվիճելի էր, ուրեմն, թէ այդ
մահաբեր զեղը կրնար զօրաւոր օժանդակ
մը դառնալ այդ ահաւոր ախտին դէմ:
Մետալը սակայն երկու երես ունի. նախ
և առաջ՝ անոր բնական պատրաստու-
թիւնը, այնպէս ինչպէս որ բնիկներէն
կու գար, շատ անվստահելի ու փոփո-
խական էր, երկրորդ՝ կը փնտրէ վտանգը
հիւանդի շնչառութիւնը անգամալուծելու:

Բայց այսօր այս խնդիրները քիչ շատ
լուծուած են: Տոքթ. Տէլ բուրարոյի
կալաքարակերպի, բուրարիտի գործածու-
թեամբ կրցաւ անոր ազդեցութեան ճշգու-
թիւն տալ, ու հնարած է նաեւ գործիք
մը արհեստական շնչառութեան համար
(այս գործիքը ծանօթ է «պողպատէ թոք»
անունով, որ յաջորդաբար ուրիշ շատ
օգտակար գործածութիւններ ալ ունեցաւ):

Ուստի մահուան վտանգը հեռացած է այլ-
եւս. նոյն իսկ զեղին աւելի քանակու-
թեամբ գործածուած ժամանակ:

Յայտնի է թէ այս խնամքը շատ ուշա-
գուժեամբ ու խելքով պէտք է կատարել,
շատ քիչ բժիշկներ ունին այս զեղին գոր-
ծածութեան բաւարար վարժութիւնն ու
ժամութեան քաւարար վարժութիւնն: Ռէ-
կարելոր գործիքները: Ուստի Տոքթ. Ռէ-
նիարտ Ուէսթ հրատարակած է ազդ մը
«The Lancet» բժշկական պարբերա-
թերթին մէջ՝ իմացնելով թէ ինքը տրա-
մադիր է երթալու իր գործիքներով ու է
մադիր է երթալու իր գործիքներով ու է
տեղ Լոնտոնէ 100 մղոն. ճառագայթով
ընթանալի մը մէջ, ուր ալ կանչեն զինքը
հիւանդի մը համար՝ երբ այլեւս շիճուկի
խնամքը անկարող ըլլայ ազդելու:

Քիչ ամիսներ վերջ Տոքթ. Ուէսթ ձայ-
նասփրութեան S. O. S. կոչ մ'ընդունեցաւ:
Ծաբաթ իրիկուն մըն էր ու ինքը մեկնած՝
առանց ըսելու թէ ուր: Մինչ այս, պիրկէն
ժանրապէս վարակուած մարդ մը կը տար-
ուի քաղաքին հիւանդանոցը: Չանազան
տեղ կը դիմուի Ուէսթը գտնելու համար,
սակայն անօգուտ տեղ, այն ատեն ձայ-
նասփրութի կոչ մը կ'արձակեն, որով կը
յաջողին զինքը գտնել: Երկու ժամ վերջ
ան հիւանդին քովն էր իր փրկարար զե-
ղով:

Ընթերցողը պիտի կարծէ թէ մենք
բժիշկներս այս բուժական մեծ յառաջա-
դիմութենէն գոհացած պիտի ըլլանք: Բայց
գիտութիւնը, ու մանաւանդ բժշկական
գիտութիւնը միշտ կատարելագոյնին կը
ձկտի. կ'ուզէ խնամքի կերպերը պարզել
ու ամէնուն մատչելի դարձնել, նաեւ ան-
վարժներու, որպէս զի անմիջապէս գոր-
ծածելի ըլլայ պէտք եղած պարագային,
կ'ուզէ մասնագէտներու հարկէն ազատ
ըլլալ ու կը ջանայ հնարել այնպիսի կեր-
պեր՝ որ ու է բժիշկ մը կարենայ գոր-
ծածել:

Թուրք. Հ. Ա. Ֆ.